ՄՐՑՈՒՅԹ՝ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱԲԵՐԻ «ԾԻԱԾԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՄԵԹՈԴԻՍՏԻ, ԴԱՍՏԻԱՐԱԿԻ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ԵՎ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀՐԱՀԱՆԳՉԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Ծաղկաբերի «Ծիածան» մանկապարտեզ» (գտնվելու վայրը ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Ծաղկաբեր բնակավայր 2-րդ փողոց 12 շենք) հայտարարում է նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի՝ 0,25 դրույք, դաստիարակի՝ 1,12 դրույք, երաժշտության դաստիարակի՝ 0,25 դրույք և ֆիզկուլտուրայի հրահանգչի 0,25 դրույք թափուր պաշտոնները զբաղեցնելու համար (այսուհետ՝ Մրցույթ):

1.Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ 17.02.2022թ-ի N 08-Ն հրամանով հաստատված նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության կարգի 3-րդ մասի 12-րդ կետով պահանջվող փաստաթղթերը.

1) դիմում (Ձև 1).
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).
3) անձը հաստատող փաստաթուղթ.
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).
5) ինքնակենսագրություն (Ձև 4).
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):
10) Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները՝ վերադարձնում:
11) Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, Մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը:
12) Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝
1. դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
2. դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.
3. տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.
4. դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

Մրցույթը անցկացվելու է՝ համաձայն ԿԳՄՍՆ 1.09.2024թ-ի N 70-Ն հրամանի:
Մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրերը՝ ԿԳՄՍՆ27.03.2024թ-ի N 20-Ն հրամանի:

Մեթոդիստի՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ: Մեթոդիստի ամսական պաշտոնային դրույքաչափը կազմում է 165000 (մեկ հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ, հաստիքային միավորը 0,25:

Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի թափուր պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:
Դաստիարակի հաստիքի համար սահմանված է 1,12 հաստիքային միավոր, պաշտոնային դրույքաչափը՝ 140000 (մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:

Նախադպրոցական ուսումնական հաստատության երաժշտության դաստիարակի թափուր պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝
1)միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և երաժշտական կրթություն (երաժշտական կամ արվեստի դպրոց).
2) դպրոցահեն նախակրթարաններում նաև՝ «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին բավարարող անձը անձը, որը տվյալ դպրոցում դասավանդում է «Երաժշտություն» առարկան:
Երաժշտության դաստիարակի հաստիքի համար սահմանված է 0,25 հաստիքային միավոր, պաշտոնային դրույքաչափը՝ 140000 (մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:

Նախադպրոցական ուսումնական հաստատության ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի թափուր պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝
1)միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և վերջին տասը տարվա ընթացքում ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի առնվազն երեք տարվա ստաժ.
2) դպրոցահեն նախակրթարաններում նաև՝ «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին բավարարող անձը, որը տվյալ դպրոցում դասավանդում է «Ֆիզկուլտուրա» առարկան:
Ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի հաստիքի համար սահմանված է 0,25 հաստիքային միավոր, պաշտոնային դրույքաչափը՝ 140000 (մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:

Փաստաթղթերն ընդունվում են հունվարի 16-ից մինչև 2026 թվականի փետրվարի 13-ը ներառյալ ամեն օր ժամը 9:00-ից 18:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից, ՀՀ Լոռու մարզ, Սպիտակ համայնք, բն. Ծաղկաբեր՝

2 փողոց 12 շենքում:
Մրցույթը անցկացվելու է երկու փուլով թեստավորման և հարցազրույցի ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.10.2024թ-ի №1981-Ա/2 հրամանի մշակված հարցաշարերի:
Մեթոդիստի մրցույթը տեղի կունենա 2026թ-ի փետրվարի 19-ին ժամը 10:00-ին:
Դաստիարակի մրցույթը տեղի կունենա 2026թ-ի փետրվարի 19-ին ժամը 12:00-ին:
Երաժշտության դաստիարակի մրցույթը տեղի կունենա 2026թ-ի փետրվարի 19-ին ժամը 14:00-ին:
Ֆիզկուլտուրայի հրահանգչի մրցույթը տեղի կունենա 2026թ-ի փետրվարի 19-ին ժամը 16:00-ին:

ՀՀ Լոռու մարզ, Սպիտակ համայնք, բն. Ծաղկաբեր՝ 2 փողոց 12 շենքում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098-22-21-77 հեռախոսահամարին: